

891.995  
Խ - 48

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅՈՒՆ

# ՄՐԳԱՎՏԱՆ

Նկարները  
Բելլա Հովհաննիսյանի

ԹԵՍԴՐԱՑ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1939

08.05.2013

9705

30 MAY 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



1799  
39

## ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Կարդա եջ առ եջ  
Այս փոքրիկ պերքը,  
Գտիր նրա մեջ  
Բո սիրած միրգը:



Նախ և առաջ՝ սա խնձոր,  
կլոր, սիրուն ու խոշոր,  
կարճ ու բարակ պոչիկով,  
վարդակարմիր թուշիկով:



Ահա կարմիր քեզ փշատ,  
Են, վոր սիրում ես գուշատ,  
Հազին շապիկ կա փոշոտ,  
Ծառն ել ունի անուշ հոտ:



Մրանք ել, այ, ի՞նչ,—  
Լիմոն ու նարինջ,  
Դեղնագույն մորթով,  
Անուշիկ հոտով:



Հապա մի տես, սա ել՝ տանձ,  
Վոսկու նման գույնը բաց,  
Վերը բարակ, վարը գեր,  
Քաղիր ծառից, առ ու կեր:




Խոշոր, դեղին, դուրեկան  
 Սերկեվի՛լ ե պատվական,  
 Վոր հոտովս իր հաճելի  
 Լցնում ե տուն ու մառանն



Բարակ, յերկար պոչիկով  
 Դեղնակարմիր թուշիկով,  
 Ահա մի միրգ վաղահաս,  
 Սրան ասում են՝ կեռաս:




Անուշ, կլորիկ,  
կեռասին քույրիկ,  
Սիրուն, կարմրերես՝  
Սա ել բան ե, տես



Պոչիկ չունի, նայիր սրան,  
Յերկու միք-լիք թշեր վրան,  
Հավանում ե միայն իրան,  
Նա կոչվում է ծիրան, ծիրան։



Սա ել՝ սիրուն  
կլոր-գլոր,  
Մորթը փայլուն  
Սալոր սալոր։



Տունկը գետնի յերեսին,  
Ինքը այսպես ահազին,  
Բազմակորիզ սեխ ե, սեխ,  
Ի՞նչ անուշ ե, ի՞նչ համեղ։



Հերթը հասավ ձմերուկին,  
Տունկը փոքրիկ, ինքն ահագին,  
Չովացնում ե ամռան շողին,  
Ամռը կեղե ունի հազին:




Հոն ե, հոն ե,  
Հապա մի տես,  
Մանր ու կարմիր՝  
Հուլունքի պես:  
Թե սիրում ես՝  
Զամբյուլդ առ  
Վազիր անտառ:



Արանք՝ կաղին և ընկույզ,  
Մեջը առողջ ու տուժոց,  
Սա ել ահա՝ շագանակ,  
Անտառներում — անքանակ:



Սա կորիզ ե գեղանի  
Աչքի սիրուն ձև ունի,  
Միջուկն այնպես անուշ ե,  
Իր անունն ել հենց նուշ ե:






Իսկ սա ել խաղող,  
Փոքրիկ ընթերցող,  
Վոր չմոռացա,  
Բերի քեզ ընծա:



Մեջը շաբ-շաբ կարմիր հուլունք,  
Թե վոր քամես՝ անհուշ հեղուկ—  
Նուռ ե սա ել միջից ճեղքված,  
Ծիծաղում ե բերանը բաց:



Սա ել, տես ահա,  
Դամբուլ ե դեղին,  
Պատկանում ե նա  
Սալորի ցեղին։

Գուրգուրում են նրանց, սնում,  
Յեվ արեգակ, և ջուր, և ող,  
Ու աճում են, հասունանում,  
Դառնում համեղ, անուշահոտ։

Մրգերը այս, վոր դու տեսար,  
Համեղ, անուշ ու հյութալի,  
Իմացիր, վոր մեր ձեռքերով  
Լավ մշակած հողն է տալիս:

Իրենց բերքով առատաքեր  
Զարդարում են նախշուն-նախշուն  
Խորհրդային յերկիրը մեր  
Ամեն գարուն, ամառ, աշուն:

«Ազգային գրադարան



NL0400221

9705

Պատ. Խմբադիր՝ Ա. Վահունի  
Սըբագրիչ՝ Ա. Արդաքանյան



Գլավվիալի լիազոր՝ վ: 2050. Հըտա. 4104.

Պատվեր 5. Տիրաժ 6000

---

Գետհրատի 1 տպարան, Ենթավան, Անինի, 65